Մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Կանանց տոնի առթիվ

08.03.2021

Հարգարժան տիկնայք՝ սիրելի մայրեր, քույրեր և դուստրեր, Լավագույն ցանկություններով շնորհավորում եմ Ձեզ Կանանց միջազգային օրվա՝ գարնանային այս հիասքանչ տոնի առթիվ:

Մարտի 8-ից սկիզբ առնող կանանց մեկամսյակը թող կրկնապատկի Ձեր ուժն ու գեղեցկությունը, Ձեր օրերը լցնի անսահման սիրով ու ջերմությամբ՝իրականություն դարձնելով Ձեր երազանքներն ու արդարացնելով սպասումները:

Օգտվելով այս գեղեցիկ տոնի ընձեռած առիթից՝ ցանկանում եմ ևս մեկ անգամ իմ առանձնահատուկ վերաբերմունքը, սերն ու խոնարհումն արտահայտել մեր հերոսածին մայրերին՝ մաղթելով նրանց ոգու ամրություն և մխիթարություն:

Հարգելի կանայք, ապրեք առողջ և շարունակեք Ձեզ բնորոշ իմաստնությամբ ամրապնդել ու ընդլայնել բարու և լույսի տիրույթները՝ հանուն Ձեր ընտանիքների բարօրության և մեր հայրենիքի շենացման:

Աստված պահապան բոլորիդ: